ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.ՌԱՆՉՊԱՐ
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ. 093187690

13. 05 .2021թ.

# ՈՐՈՇՈՒՄ N 16

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Ռանչպար համայնքի ավագանու թիվ 4 նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Ռանչպար համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտիավորման նախագիծը) հաստատելու մասին:
2. Ռանչպար համայնքի վարչական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
3. Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2021 թվականի պետական բյուջեի միջոցներից համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին:
4. Հողամասի օտարման թույլտվություն տալու մասին
5. Օտարվող հողամասի մեկնարկային գինը սահմանելու մասին
6. Օտարվող հողամասի մեկ լոտի նվազագույն չափը սահմանելու մասին:

Կողմ՝ Ի. Պետրոսյան

Կողմ՝ Ա. Թամոյան

Կողմ՝ Լ. Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Ռանչպար
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ.093187690

13.05.2021

ՈՐՈՇՈՒՄ 17

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 3 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 31.03.2021թ. թիվ 2-5 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը>
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Ռանչպար համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:

2.Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններ (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

### ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)

Աղյուսակ 1.

| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակություն | մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակություն | մակերեսը (հա) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | |
| | Գյուղատնտեսական | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նշանակության հողերից | | | |
| ԳԳ | | | Գյուղատնտեսական նշանակության հողերից | |
| ԳԳ.1 | գյուղատնտեսական այլ | 43.44 | արոտ | 43.44 |
| ԳԲ | | | Բնակավայրերի | |
| ԳԲ.1 | արոտ | 1.41 | տնամերձ | 1.41 |
| ԳԲ.2 | արոտ | 1.11 | տնամերձ | 1.11 |
| ԳԲ.3 | արոտ | 0.91 | տնամերձ | 0.91 |
| ԳԲ.4 | արոտ | 1.11 | տնամերձ | 1.11 |
| ԳԲ.5 | արոտ | 0.19 | Հասարակական նշանակության կանաչապատման | 0.19 |
| ԳԲ.6 | արոտ | 1.94 | Ընդհանուր օգտագործման (փողոցներ) | 1.94 |
| ԳԲ.11 | գյուղատնտեսական այլ | 0.40 | տնամերձ | 0.40 |
| ԳԱ | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | |
| ԳԱ.1 | գյուղատնտեսական այլ | 6.45 | Գյուղ. արտադրական | 6.45 |
| ԳԱ.2 | գյուղատնտեսական այլ | 2.61 | Գյուղ. արտադրական | 2.61 |
| ԳԱ.3 | գյուղատնտեսական այլ | 2.07 | Գյուղ. արտադրական | 2.07 |
| ԳԱ.4 | արոտ | 2.00 | Գյուղ. արտադրական | 2.00 |
| ԳԿ | | | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| ԳԿ.1 | գյուղատնտեսական այլ | 0.29 | Էներգետիկայի | 0.29 |
| ԳՋ | | | Ջրային | |
| ԳՋ.1 | արոտ | 4.69 | ջրամբար | 4.69 |
| | Բնակավայրերի հողերից | | | |
| ԲԲ | | | Բնակավայրերի | |
| ԲԲ.1 | Բնակելի այլ | 0.47 | տնամերձ | 0.47 |
| | Հատուկ պահպանվող տարածքների | | | |
| ՀպԿ | | | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| ՀպԿ.1 | Հատուկ պահպանվող տարածքների | 1.53 | Գերեզմանոց (գ./ու.) | 1.53 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՀպԿ.2 | Հատուկ պահպանվող տարածքների | 0.67 | Գերեզմանոց (գ./ու.) | 0.67 |
| ՀպԿ.3 | Հատուկ պահպանվող տարածքների | 0.86 | Գերեզմանոց (գ./ու.) | 0.86 |

Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)

Աղյուսակ 2

| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | մակերեսը (հա) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| ԳԲ | | | Բնակավայրերի | |
| ԳԲ.7 | արոտ | 1.31 | տնամերձ | 1.31 |
| ԳԲ.8 | արոտ | 0.93 | տնամերձ | 0.93 |
| ԳԲ.9 | արոտ | 0.56 | տնամերձ | 0.56 |
| ԳԲ.10 | արոտ | 1.45 | Հասարակական նշանակության կանաչապատման | 1.45 |
| ԳԲ.14 | գյուղատնտեսական այլ | 4.13 | Հասարակական նշանակության կանաչապատման | 4.13 |

Երկարաժամկետ միջոցառումներ (10-15 տարի)

Աղյուսակ 3.

| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | մակերեսը (հա) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| ԳԲ | | | Բնակավայրերի | |
| ԳԲ.12 | գյուղատնտեսական այլ | 0.94 | Հասարակական նշանակության կանաչապատման | 0.94 |
| ԳԲ.13 | գյուղատնտեսական այլ | 1.39 | Հասարակական կառուցապատման (մարզադաշտ) | 1.39 |
| | | | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| ԳԿ | | | | |
| ԳԿ.2 | գյուղատնտեսական այլ | 0.41 | կոմունալ | 0.41 |
| ԳԿ.3 | գյուղատնտեսական այլ | 0.15 | կոմունալ | 0.15 |

*3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14[3] հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման փաստաթղթերում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:*

պարեկան ընթացիկ հաշվառման փվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արփացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ՝ Ի.Պետրոսյան
Կողմ՝ Ա. Թամոյան
Կողմ՝ Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ. ՌԱՆՉՊԱՐ
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ. 093187690

13.04.2021թ.

## ՈՐՈՇՈՒՄ N 18

### ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ռանչպար համայնքի 2021 թվականի վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.
Պահուստային ֆոնդից
Բաժին 11, խումբ 1, դաս 2 հոդված 4891-ից պակասեցնել 250,0հազ.դրամ ավելացնելով
Բաժին 6, խումբ4, դաս1 հոդված 4251-ին փողոցների լուսավորության սպասարկման համար
Բաժին 1, խումբ 1, դաս 1 հոդված 4232-ից պակասեցնել 280,0հազ.դրամ ավելացնելով
Բաժին 5, խումբ 6, դաս 1 հոդված 4269-ին այգու բարեկարգման աշխատանքների համար:

Կողմ՝ Ի.Պետրոսյան

Կողմ՝ Ա.Թամոյան

Կողմ՝ Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*Գ.Ռանչպար*
*ranchpar.ararat@mta.gov.am*
*<ԵՌ.093187690*

*13.05.2021*

*ՈՐՈՇՈՒՄ 19*

*ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, յիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությն 2019 թվականի հունվարի 31-ի թիվ 62-Ն որոշումը և Ռանչպար համայնքում 11.05.2021 թվականի կայացած հանրային լսումների արձանագրությունը.*
*Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին*

*ՈՐՈՇՈՒՄ Է*

*Նպատակահարմար համարել համայնքի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2021 թվականի պետական բյուջեից համայքներին սուբվեցիաների տրամադրման ծրագրին և Հայստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի թիվ 62-Ն որոշմամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան ներկայացնել Ռանչպար համայնքի գազաֆիկացման ծրագիր սուբվենցիաների ամբողջական փաթեթները:*

Կողմ՝ Ի. Պետրոսյան
Կողմ՝ Ա. Թամոյան
Կողմ՝ Լ. Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Գ.Ռանչպար
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ.093187690


13.05.2021

## ՈՐՈՇՈՒՄ 20

## ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդ վաճառքի կարգով օտարել 03-081-0130 -0011 կոդի 4,55592հա գյուղնշանակության արոտ՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

Կողմ՝ Ի.Պետրոսյան
Կողմ՝ Ա. Թամոյան
Կողմ՝ Լ.Կոլյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Ռանչպար
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ.093187690

13.05.2021

## ՈՐՈՇՈՒՄ 21

## ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Օտարվող գյուղնշանակության արոտի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ՝ Ի. Պետրոսյան
Կողմ՝ Ա. Թամոյան
Կողմ՝ Լ. Կոլյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա.Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՌԱՆՉՊԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Գ.Ռանչպար
ranchpar.ararat@mta.gov.am
ՀԵՌ.093187690

13.05.2021

## ՈՐՈՇՈՒՄ 22

## ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԵԿ ԼՈՏԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.
Արարատի մարզի Ռանչպար համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղանշանակության արոտի մեկ լոտի նվազագույն չափը սահմանել 4,55592հա;

Կողմ` Ի.Պետրոսյան
Կողմ` Ա. Թամոյան
Կողմ` Լ.Կոլիյան

Ռանչպար համայնքի ղեկավարի պաշտոնակատար` Ա.Պողոսյան